ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/15318/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2024 թվականի նոյեմբերի 13-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/15318/02/23 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 17.07.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 24.07.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմումը վերադարձնելու մասին Դատարանի որոշումը, հայցադիմումն ու դրան կից փաստաթղթերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում այն կրկին ներկայացրել է Դատարան:

Դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 03.08.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող Երևանի քաղաքապետարանից պահանջվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/6» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոշվել է եզրափակիչ դատական ակտը հրապարակել 14.09.2023 թվականին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 30.08.2023 թվականի որոշմամբ գործի քննության ժամկետը երկարաձգվել է, որոշվել է եզրափակիչ դատական ակտը

հրապարակել 29.09.2023 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

Նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցային վաղեմության միջնորդության մասով կողմերի միջև բաշխվել է ապացուցման պարտականությունը:

Դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 22.09.2023 թվականի որոշմամբ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է, գործի քննությունը վերսկսվել է:

Դատարանի 29.09.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. « 1. «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը (որոշումը) անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել՝

անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կողմից www.gnumner.am կայքում հրապարակված՝ 09.06.2023 թվականի ամսաթվով թվագրված՝ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու վերաբերյալ ծանուցումը (որոշումը):

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ-ի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: (...) »:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.05.2024 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, որոշվել է. « 1. Երևանի քաղաքապետարանի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/15318/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 29.09.2023 թվականի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում կայացվելիք դատական ակտով: (...) »:

Թիվ ԵԴ2/15318/02/23 քաղաքացիական գործը 07.11.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին, իսկ 08.11.2024 թվականին դատավորի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործին կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների

մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ, 414-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2024 թվականի դեկտեմբերի 25-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**